ԱՆԴՐԱՆԻԿ ԵՍԱՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ

ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XVII ԴԱՐՈՒՄ

Բանալի բառեր՝ *Հյուսիսարևելյան Հայաստան, մելիքություն, Տավուշ, Սեֆյաններ, Միափոր, շահ Աբաս, Շատախ, Քամալ, Բերդ, Կունեն, Խերումյաններ:*

Սեֆյան Իրանի և Օսմանյան Թուրքիայի շուրջ մեկուկեսդարյա պատերազմն ավարտվեց 1639 թ. Կասրե Շիրինի հաշտության պայմանագրով: Երկու երկրների միջև մոտ 90-ամյա խաղաղություն հաստատած այդ պայմանագրով, ի թիվս հայկական այլ տարածքների, Հյուսիսարևելյան Հայաստանը նորից անցավ Սեֆյան Պարսկաստանին: Հյուսիսարևելյան Հայաստան ասելով հասկանում ենք Արցախից Լոռի, և Սևանա լճից Կուր գետն ընկած տարածքները: Այն ներառում է Մեծ Հայքի Ուտիք նահանգի Շակաշեն, Գարդման, Տավուշ և Աղուէ գավառները, ինչպես նաև Գուգարք նահանգի հարավարևելյան Ջորոփոր ու Կողբոփոր գավառները: Այժմ այս տարածքները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզին և Ադրբեջանի Հանրապետության կազմում գտնվող Կուրի աջափնյա շրջաններին՝ մասնավորապես Գետաբակի, Շամքորի, Դաշքեսանի, Ղազախի, Թովուզի, Գերանբոյի և մասամբ Գյանջայի շրջաններին:

Հյուսիսարևելյան Հայաստանը մտնում էր Սեֆյանների տերության Գանձակի (Ղարաբաղի) բեկլարբեկության մեջ: ԺԷ. դարի պարսկական աղբյուրներն ամբողջովին չեն ճշգրտում բեկլարբեկության սահմաններր: Դրա մասին մանրամասն պատկերացում է տալիս 1593 թ. Գանձակի բեկլարբեկության օսմանյան[1] համառոտ դաֆթարը, ըստ որի՝ էյալեթն[2] ուներ 7 սանջակ, 39 նահիյե[3]:

---

1 ԺԷ. դարի վերջին Օսմանյան Կայսրությունը Սեֆյաններին դուրս մղեց նշված տարածքներից: Հայաստանն ու Վրաստանը ինչպես նաև Սեֆյանների մերձկասպյան տիրույթներն անցան Թուրքիային:

2 Օսմանյան կայսրության էյալեթներր Սեֆյանների բեկլարբեկության համարժեքն են:

3 **Dr. Hüsamettin Memmedov**. "Beylerbeylikten Hanlığa: Gence - Karabağ", *Türkler, Orta Çağ*, cilt 7, Ankara, 2002 s. 66:

Հնարավոր է, որ Աբաս Ա- շահի (1587-1629)՝ երկրամասը նվաճելուց հետո այս բեկլարբեկության սահմանները մեծ փոփոխություններ չէին կրել: Հյուսիսարևելյան Հայաստանի օրինակով կարելի է պատկերացում կազմել Սեֆյան տերության վարչական կառուցվածքի առանձնահատկությունների մասին: Այն բնորոշվում էր ոչ կենտրոնաձիգ իշխանությամբ ու կառավարման համակարգում թյուրքալեզու քոչվոր ցեղերի ներգրավմամբ: Տիպական է, որ բեկլարբեկության կառավարումը հանձնված էր ղզլբաշական ղաջար նշանավոր ցեղին: Հյուսիսարևելյան Հայաստանում հաստատված մյուս քոչվոր ցեղերը նույնպես զանազան ծառայությունների դիմաց պարսից շահերից ստանում էին հողեր՝ օլքա[4], որոնք հետագայում ժառանգաբար փոխանցվում էին: Գանձակի բեկլարբեկության կառավարումը հանձնվեց ղզլբաշական նշանավոր ղաջար ցեղին: Երբ շահ Աբասը 1604 թ. Երևանին տիրելուց հետո քայլեր էր ձեռնարկում Շիրվանը գրավելու ուղղությամբ, նա վրաց կրոնափոխ արքայորդի Կոստանդինին ուղարկեց Արդաբիլ, որտեղ իրեն պետք է միանային մի շարք ցեղապետեր: Նրանց թվում էր Շամսի Խան ղազախլուն, որն օսմանյան տիրապետության շրջանում տիրափոխ էր եղել՝ ստանալով փաշայի տիտղոս[5]: Մյուս ցեղապետերից Ալի Խան սուլթանը՝ զուլքադար ցեղի շամսադինլու ճյուղից[6], օլքա ստացավ Տավուշ գավառում ու Գարդմանում: Այսպիսով, Հյուսիսարևելյան Հայաստանում սկսեց ավելի ամրապնդվել ու հիմնավորվել եկվոր քոչվոր բնակչությունը: Նպատակ ունենալով հպատակեցնել Վրաստանը՝ շահն այս ցեղապետերին ոչ միայն չպատժեց նախկինում օսմանցիների հետ համագործակցության համար, այլ ավելի ընդարձակ տարածքներ հատկացրեց: Նրանք թեպետ ենթարկվում էին Գանձակի բեկլարբեկին, սակայն նրանց տիրույթներն ու իշխանությունը ժառանգական էին[7]:

Ինչ վերաբերում է հայ բնակչությունը, ապա այն հիմնականում շարունակում էր ապրել պաշտպանության համար նպաստավոր, սակայն տնտեսական

---

4 **Հ. Փափազյան**, *Մատենադարանի պարսկերեն վավերագրերը*, պրակ առաջին (ԺԵ-ԺԶ. դդ.), Երևան, 1956, էջ 123:

5 **Eskandar Beg Monshi**, *History of Shah Abbas the Great*, vol. II, Boulder, Colorado, 1930, p. 862.

6 Ալի խան սուլթանի մասին հիշատակություն հանդիպում ենք 1610 թ. մի հիշատակարանում. «Գրեցաւ ձեռեամբ մեղաւոր և ախմար գրչի Դաւիթ սուտանուն եպիսկոպոսի և անարժան Յովասափ երիցոյ, ի թուականիս Հայոց ՌԾ. և Թ. (1610), ի երկիրն Ջակամայ, ի գլուղն Ղարամուրատոյ, ի կաթողիկոս տէր Յոհաննիսին, և [ի?] եպիսկոպոսութեան երկրիս տէր Մելֆիսեթին, որ էր իշխան երկրիս՝ հոգևոր և մարմնաւոր, և տէր Գրիգորին, ի թագաւորութեանն շահ Ապասին, և ի ղանութեան երկրիս Ալիխան սու[լ?]թանին, ի դառն և վշտաշատ ժամանակիս, որ գրով ոչ կարեմք արկանել...», *Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.)*, հ. Ա, կազմեցին՝ ***Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան***, Երևան, 1974, էջ 363:

7 **И. П. Петрушевский**, *Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI-начале XIX вв.*, Ленинград 1949, с. 101.

գործունեության համար անբարենպաստ լեռնային բնակավայրերում: Գրչագիր ու վիմագիր աղբյուրներն ուշագրավ վկայություններ են հաղորդում Հյուսիսարևելյան Հայաստանի լեռնային շրջաններում ստեղծված մի քանի մելիքությունների մասին, որոնք հետազոտողների պատշաճ ուշադրությանը չեն արժանացրել: Նախ, հարկ է նկատել, որ քննվող ժամանակաշրջանում մելիք էին կոչվում ինչպես գյուղի, քաղաքի ու ավանի կառավարիչները, որոնց հիմնական գործառույթը հարկահավաքությունն էր[8]*, այնպես էլ՝ Հայաստանի լեռնային շրջաններում տիրույթներ ունեցող ավատատերերը*[9]*: Վերջիններս ենթակա էին Սեֆյաններին, կատարում էին տարբեր ծառայություններ, բայց ներքին հարցերում՝ հարկահավաքություն, դատավարություն և այլն, ունեին լիակատար ինքնուրույնություն*[10]*: Մելիքական իրավունքը ժառանգական էր, թեև հաստատվում էր շահական հրովարտակներով՝ ֆերմաններով*[11]*: Շահ Աբասի 1606 և 1614 թթ. վրացական արշավանքների ժամանակ Արցախի ու Գանձակի շրջակա տարածքների մելիքներն օժանդակում էին նրան*[12]*: Արշավանքից հետո շահն իր երախտագիտությունն է հայտնում նրանց՝ առավել աչքի ընկածներին տալով կալվածքներ և մելիքության իրավունք: Բացի տոհմիկ ավագանուց, շահ Աբասը Սեֆյան կառավարման համակարգում առաջ էր քաշում նաև հասարակ մարդկանց*[13]*, որոնք չունեին նշանավոր ծագում*[14]*: Դա վերաբերում էր նաև ոչ իշխանական ծագում ունեցող այն հայերին, որոնք դարձան մելիքներ: Հյուսիսարևելյան Հայաստանում մելիքությունների գոյությունը պայմանավորվում է նաև այն հանգամանքով, որ ի տարբերություն կենտրոնական Հայաստանի՝ այն մասամբ զերծ էր մնացել 1604 թ. բռնագաղթից:*

Տավուշ գավառում XVII դարի սկզբում գոյություն ուներ Տավուշի մելիքությունը: Մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Ի թվականիս [Ռ]ԾԷ. (1608), ի գուղս որ կոչի Բերդ, [յ]երկիր[ս] որ կոչի Թայուզ: Ես՝ մելիք Ալիխանս,

---

8 Նույն տեղում, էջ 245: **Լեո**, *Երկերի ժողովածու*, հ. 3, Երևան, 1969, էջ 81:

9 **R. H. Hewsen**, "The Meliks of Eastern Armenia," *Revue des Études Arméniennes* IX, Paris, 1972, p. 294.

10 **Ա. Մաղալյան**, «Արցախի մելիքությունները և Ղարաբաղի խանության ծագումը», *Հայոց պատմության հարցեր*, № 10, Երևան 2009, էջ 88:

11 **Լեո**, *Հայոց պատմություն*, հ. 3, գ. երկրորդ, Երևան, 1973, էջ 17:

12 **Ք. Կոստիկյան**, «Ֆազլի Բեկ Իսֆահանի տարեգրությունը որպես հայ ժողովրդի ԺՁ-ԺԷ. դարերի պատմության աղբյուր», *Միջազգային գիտաժողով նվիրված հայագետ-արևելագետ Արամ Տեր-Ղևոնդյանի (1928-1988) ծննդյան 90-ամյակին, գիտաժողովի նյութեր*, Երևան, 2019, էջ 38:

13 *The Cambridge History of Iran*, vol. VI, Cambridge University Press, 1986, p. 364.

14 **Զաքարիա Քանաքեռցի**, *Պատմութիւն*, աշխատասիրությամբ ***Ա. Վիրաբյանի***, Երևան, 2015, էջ 51:

կողայկիցն իւր խոստրովն որ գնեցինք սբ. Աւետարան[ս] հալալ հընչից մերոց և յիշատակ հոգոց մերոց և իմ ծնաւղաց մերոց...»[15]:

Տավուշում XVII դարում գոյություն ունեցած մելիքության մասին վկայություն կա նաև Բերդի՝ 1930-ական թթ. երկրորդ կեսին հիմնահատակ ավերված եկեղեցու շինարարական արձանագրության մեջ[16]: *Արձանագրությունը ժամանակին գրի էին առել Մակար Բարխուդարյանցը*[17] *և «Արձագանք» թերթի թղթակից Քաջիկյանը:*

Եկեղեցու արձանագրության համեմատաբար հաջող վերծանությունը Քաջիկյանինն է: Այնտեղ կարդում ենք. «Անուն Աստուծոյ, ես թիփլիզեցի ***Զիթախենց մղտեսի*** *խոճա Սոռիլս շինեցի եկեղեցիս ձեռամբ Խորանաշատու Յովհաննէս եպիսկոպոսի և Թաւուզայ երկրիս* ***մելիք Ղորխմազին կամակցությամբ յիշատակ հոգւոյ իմոյ և ծնողաց իմոց Թաղին պեկի Սուլթանին և կողակցին իմոյ Դարէջանին,*** *և որդւոց իմոց Ըստեփանոսին և կողակցին Ասլեզատին, Յարութիւնին և կողակցին Պեկի Խաթունին, Պօղոս սարկաւաքին և դստերցն իմոց ապաշխարող Աննային և Հռիփսիմին, Շահրուպանին և իւր դուստր Քեթևանին, փեսա Մելքոնին և իւր դուստր Պեկի Սուլթանին»*[18]: *Մ. Բարխուդարյանցը գտնում է, որ Ղորխմազը մելիք Ղորխմազի մկրտության անունը չէ, այլ մականունը: Սակայն XVII դարում այս անունը, որպես անձնանուն տարածված է եղել հայոց շրջանում*[19]: *Այս անթվակիր արձանագրության ժամանակի*[20] *և «Թավուզայ երկրի» մելիքության սահմանների գոնե մոտավոր ճշգրտմանը նպաստում է Քամալ գյուղում Ավետիս երեցի ընդօրինակած՝ Մատենադարանի Հմր 265 ձեռագիր Ավետարանի հիշատակարանը. «...Եւ արդ, գրեցաւ զսա ի յերկիրս Թաւուշու, ի գ[ե]ա[ւ]ղս Քամալ կոչեցեալ, ի դուռն Սուրբ Աստուածածնիս, ընդ հովանեաւ սուրբ մանդռոիս (=մատուռիս), ի թուին Հայկազնեա |236բ| ՌՃԺԷ. (1668), ի*

---

15 *Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.)*, հ. Ա, էջ 284:

16 Եկեղեցու ներսի արձանագրության մասին տեղյակ էր նաև Կ. Ղաֆադարյանը, ով 1935 թ. արշավախմբով այցելել էր Բերդի տարածաշրջան: Սակայն Ղաֆադարյանին չի հաջողվել ընթերցել արձանագրությունները. «Բերդ գյուղի մեծ եկեղեցին ևս ունի արձանագրություններ, բայց եկեղեցին պահեստի է վերածված և լեցուն է ցորենով, ուստի հնարավոր չեղավ արձանագրությունները, որոնք ներսում էին, կարդալ», տե՛ս **Կ. Ղաֆադարյան**, *Էջեր հայոց միջնադարյան մշակույթի և պատմության*, Երևան, 2007, էջ 304:

17 **Մակար եպս. Բարխուտարեանց**, *Արցախ*, Երևան, 1999, էջ 329:

18 *Արձագանք*, 1888, № 7, էջ 88:

19 Տե՛ս օրինակ *Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ (1641-1660 թթ.)*, հ. Գ., կազմեց ***Վ. Հակոբյան***, Երևան, 1984, էջ 868:

20 Եկեղեցու կառուցման մոտավոր թվականի որոշման համար օգտակար են նաև Հյուսիսարևելյան Հայաստանում Զիթաղյան տոհմի շինարարական գործունեության մասին վկայող այլ վիմագիր արձանագրությունները: Տե՛ս *Դիվան հայ վիմագրության*, պ. VI, Երևան, 1977, էջ 49: **Յովհաննէս եպիսկոպոս Շահիսթունեանց**, *Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ*, էջմիածին, 2014, էջ 351:

հայրապետութեան տէր ***Պետրոսի, ի յԱթոռն Խորանաշատու, ի յաթոռական Յովաննէս արհեպիսկոպոսին****...»*[21]*: Այս Հովհաննեսը և Բերդի եկեղեցու արձանագրության մեջ հիշատակվածը միևնույն հոգևորականն է: Սրանից կարող ենք եզրակացնել, որ Բերդի եկեղեցին կառուցվել է XVII դարի երկրորդ կեսին: Մելիք Ղորխմազը հիշատակվում է նաև այս ձեռագրի հաջորդ՝ անթվական, բայց ըստ ամենայնի նույն XVII դարով թվագրվող հիշատակարանում. «Ես՝ Աւաքս, Յուհանս, Նազլուխ[ա]նս, Խոստրովս, ես՝ Շիրազս, ես՝ Հուռումս գիր տվինք տէր Սարգսին: Աստուած վկայ, մեք Նաւուս ճամիաթս վկայ, որ տուն եւ ապրանքն, հողն եւ մահլէն եւ գիրանք: Ես՝* ***մէլիք Ղուրխմազս վկայ****, ես՝ Աթէս վկայ, ես՝ Մայիլս վկայ, Արութինս վկայ, Նապին վկայ, ես՝ Սարհաթս վկայ, Տուրոխան վկայ, Մարտիրոսն, Ղարայխան, Պալաման վկայ, Խէչումն, տէր Ղազարն վկայ: Ես՝ Ովանէս էրէցս գրեցի. մեր ապրանքն տվինք Ղուկ[ասու] |237բ| որդոյն՝ տէր Սարգսին: Ով ետ ու առաջ տայ, Գ. հարիւր ԺԸ. հայրապետաց նզոված լինի, տէղի հագիմին՝ ԺԲ. Թուման տայ»*[22]*:*

Այսպիսով, առաջին հիշատակարանը պատկերացում է տալիս «Թաւուզայ երկրի» սահմանների մասին: Քամալ գյուղը գտնվում էր Տավուշ գավառում[23]*, այժմ՝ Ադրբեջանի Հանրապետության Թովուզի շրջանի Ալիբեյլու գյուղի հարևանությամբ*[24]*: Այսինքն՝ մելիք Ղորխմազի տիրույթները տարածվել են ըստ ամենայնի Բերդի շրջակայքից մինչև Տավուշ գետի միջին հոսանք: Մելիք Ղորխմազը իշխել է 1660-ական թվականներից համարյա մինչև դարի վերջերը: Նրա ժառանգների և մելիքության հետագա ճակատագրի վերաբերյալ աղբյուրները լռում են:*

Հյուսիսարևելյան Հայաստանի XVII դարի մելիքություններից էր Շատախի մելիքությունը: Շատախ գյուղը գտնվել է համանուն գետակի ձախ ափին և ձեռագիր աղբյուրներում առաջին անգամ հիշատակվում է 1621 թ.[25]*: Այստեղի մելիքությունը հիշատակվում է 1636 թ. Շատախում գրված՝ Մատենադարանի Հ*[մր] *713 ձեռագիր ժողովածուի հիշատակարանում: Ժողովածուն բաղկացած է տարբեր ժամանակներում ստեղծված երկու ձեռագրից: Առաջինի գրիչը Հովհաննես երեցն է: Նա իր թողած հիշատակարանում նշում է, որ ժողովածուն*

---

21 *Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց*, հ. Բ., կազմեցին՝ ***Օ. Եգանեան, Ա. Ջէյթունեան, Փ. Անթաբեան, Ա. Քեռշկերեան,*** Երևան, 2004, էջ 275:

22 Նույն տեղում, էջ 276:

23 *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հ. 5, էջ 294:

24 Գյուղի բնակիչները XIX դ. վերջում տեղափոխվել են ներկայիս Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանի Նորաշեն գյուղ: **Ս. Դարբինյան**, «Հովհաննես արհեպիսկոպոս Շինարար», *Էջմիածին*, 1991, № Ա.-Գ., էջ 120, հմմտ. **Բ. Մելյան,** «Քամալ-Գունաշ-Նորաշեն», *Գիտական կյանք*, ԵՊՀ, Երևան, 2001, էջ 202-204:

25 **Ս. Կարապետյան**, *Հյուսիսային Արցախ*, Երևան, 2004, էջ 249:

կազմել է «ի խնդրու մեծաշուք Մելիք Սիմաւոնի», ապա գրում է հետևյալը. «Ըստացող գրոցս՝ յիշխանաց իշխան եւ պարունաց պարուն, մեծաշուք եւ քաղցրայհոգի մէլիք Սիմաւոնն ըստացաւ գիրքս՝ յիշատակ իւրն եւ իւր ծնաւղացն, հայրն՝ Առըստակէց քահանայն եւ մայրն՝ պարուն Գուլաղէն, որք Քրիստոս են հանգուցեալ»[26]*: Հովհաննես երեցի այս վկայությունից պարզվում է, որ Սիմավոնի հայրը քահանա է եղել:*

Ժողովածուի երկրորդ՝ 1687 թ. գրված ձեռագրի հիշատակարանում, կրկին մելիքության մասին վկայություն է հանդիպում: Ձեռագրի գրիչ Բարսեղը հիշատակում է պատվիրատուին՝ մելիք Հախնազարին և նրա ընտանիքի անդամներին. «ՀԲ. լեզուս շնորհիւ Աստուծոյ հասցէ օգնութիւն պարոն մալիք Հախնազարին եւ նորաբողբոջ որդւոյն՝ Քամալպէկին. ամէն» (113ա): «Ըստացող եւ ցանկացող այսմ տառիս, որ կոչի Քաղուածու, բարեպաշտ եւ աստուածասէր, իշխանաց զարմ եւ մեծազգի, պարոնաց պարոն մալիք Հախնազարն, որ ջերմեռանդ սիրով ետ հաւաքեալ եւ գծագրեց զգիրքս զայս» (129բ)[27]*:*

Երկու հիշատակարաններում նշված անունների համեմատությունից հետաքրքիր պատկեր է ստացվում: Առաջինում հիշատակված մելիք Սիմավոնը ունեցել է երեք որդի. «Դարձեալ յիշեցէք Մէլիք Սիմաւոն եւ կողակիցն իւր՝ պարուն Հիւրիխանն, եւ իւր ***ծաղկեալ որդիքն՝ պարուն Յիսայխանն եւ կողակիցն իւր՝ խաթուն Սալվարն,*** *այլ եւ դեռաբոյս որդիքն՝ Աղայճանն, Ամիճանն»*[28]*: Մելիք Սիմավոնից հետո հավանաբար մելիքությունն անցել է նրա ավագ որդուն՝ Իսախանին: Վերջինիս մասին այլ հիշատակություն չկա: Այնուհետև Իսախանին հաջորդել է որդին՝ երկրորդ ձեռագրի պատվիրատու մելիք Հախնազարը: Դա հստակ երևում է գրիչ Բարսեղի հետևյալ վկայությունից. «Աստուածն ամենայնի երկար ժամանակօք բարի վայելումն տացէ անձին իւրոյ, եւ ետ յեքանելոյ աստի կենցաղոյս՝* ***մնալ յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ծնօղացն, հօրն՝պարոն Իսախանպէկին,*** *|130ա| եւ մօրն՝* ***Սալվար խանումին*** *եւ ամենայն արեան մերձաւորացն»*[29]*:*

Այս մելիքության մասին անուղղակի հիշատակություն է եղել նաև Շատախին հարևան Հարցհանկիստ (Զովդառ) գյուղից ոչ այնքան հեռու գտնվող Մլզնաբերդ անունով հայտնի ամրոցի եկեղեցու մի չպահպանված արձանագրության մեջ: Այն հետևյալն է հայտնել. «Կամաւն Աստուծոյ ես ***Մելիք Ի****... նորոգեցի սուրբ մենաստ... յիշատակ հոգոց իմոց և կողակիցն* ***Հիւրխանին*** *և որդիքն իմ* ***Իսախանին, Աղաճանին, Ամիրճանին*** *և ծնողացն իմ* ***Արիստակէս քա-***

---

[26] *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց*, հ. Գ, կազմեց՝ ***Օ. Եգանեան***, Երևան, 2007, էջ 429:
[27] Նույն տեղում, էջ 433:
[28] Նույն տեղում, էջ 429:
[29] Նույն տեղում էջ 433:

*հանային և մայրն իմ պարոն **Գիւղինին**, ի ժամանակս Շահսէֆին ... ութ ... Ղուլիխանին կաթողիկոս Գանձաքա Տեր Գրիգորին, թվ. ՌՁ...»*[30]*: Արձանագրության թվականի միավորը եղծված է, բայց այն անկասկած 1630-ական թվականներին է պատկանում: Դատելով թերի ընթերցմամբ մեզ հասած այս արձանագրության մեջ հիշատակված մելիքի ընտանիքի անդամների անուններից, խոսքը մելիք Սիմավոնի մասին է, որի անվան սկզբնատառը Ս-ի փոխարեն սխալմամբ է Ի կարդացվել: Հետևաբար, մելիք Սիմավոնն է 1630-ական թվականներին նորոգել Մլզնաբերդի եկեղեցին, իսկ Հարցհանկիստ գյուղը մտել է նրա տիրույթների մեջ: Ասվածի օգտին է վկայում նաև 1668 թ. Մլզնաբերդում ընդօրինակված Ավետարանի հետևյալ հիշատակարանը. «Արդ, գրեցաւ զսուրբ աւետարանս ի թուականութեանս Հայոց ՌՃԺԷ., ի հայրապետութեան երիցս երանելոյ հովուապետին տանս Աղուանից տեառն Պետրոսի սրբազան կաթուղիկոսին և առաջնորդութեան սուրբ աթոռոյս Ամենափրկչին պարոն տէր Յովհաննիսին, թագաւորութեան Պարսից Փոքր Շահ Աբասին... խանութեան Ուղուրլու խանին և իշխանութեան երկրիս մեծաշուք եւ բարեպաշտ Սիմաւոն Մելիքին: Գրեցաւ ձեռամբ անարժան սուտանուն Յովհաննիսի, ի յերկիրս Գանջայ, ի գիւղս որ կոչի Հարցհանկիս(տ), ի դրան սուրբ Մլզնաբերդին. ամէն»*[31]*:*

Մելիք Հախնազարի անունը հիշատակվում է նաև Շամքոր գետի աջ ափին գտնվող Նոր Փիփ գյուղի փայտաշեն ծածկով եկեղեցու փայտե սյունի վրայի արձանագրության մեջ: Այնտեղ գրված է. «Իշխանութեան Մելիք Հախնազարի, Պապեր ի Քրիստոս յիշեցէք, Հրապետն, որդիք Պալին Սարգիս, հանգուցեալ որդին տէր Ղազար, մայրն իւր Նարկիզն. թվ.: ՌՃԼԶ: (1687)»[32]*:*

Այսպիսով, Շատախի մելիքությունը գոյություն է ունեցել առնվազն 1636 թ. մինչև XVII դարի վերջերը: Այն, անկասկած, ընդգրկել է ոչ միայն Հարցհանկիստ և Նոր Փիփ գյուղերը, այլև դրանց հարևանությամբ ժամանակին գոյություն ունեցած այլ հայկական բնակավայրեր:

Շատախի մելիքության մասին այլ տեղեկություններ չեն պահպանվել: Հավանաբար այն թուլացել է և դադարել գոյություն ունենալուց XVIII դարասկզբում՝ պայմանավորված լեզգիների հարձակումներով:

Հյուսիսարևելյան Հայաստանի Կայենաձոր գավառում շահ Աբասի ժամանակներում գոյություն ունեցած մելիքության մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Զաքարիա Քանաքեռցին: Նա ավանդազրույցի ձևով ներկայացնում է մի պատմություն, ըստ որի Միափոր գյուղում ապրող հովիվ Աթան շահ Աբասից կալվածքներ է ստանում և դառնում մելիք: Համաձայն պատմիչի՝

---

[30] *Արձագանք*, 1886, № 21, էջ 307:

[31] **Մակար եպս. Բարխուտարեանց**, *Արցախ*, էջ 183:

[32] *Դիվան հայ վիմագրության*, պ. V, Արցախ, կազմեց ***Ս. Գ. Բարխուդարյան***, Երևան, 1982, էջ 270:

շահ Աբասը Վրաստանը հնազանդեցնելուց հետո անցնում է Հյուսիսարևելյան Հայաստանի Կայենաձոր գավառ՝ ձմեռելու: Մի օր շահը որոշում է իր սովորության համաձայն կերպարանափոխված գյուղերով շրջել՝ շոշափելու հպատակների տրամադրությունները: Նա հյուրընկալվում է Միափոր գյուղի հովիվ Աթայի տանը, որտեղ ամուսնու բացակայությամբ կինը չարչի ներկայացած օտարականին ջերմ ընդունելության է արժանացնում[33]: Հաջորդ օրը շահը հրամայում է գտնել Աթային և ընտանիքով ներկայացնել իրեն: Շահ Աբասը նրանց հյուրընկալում է, ապա կարգադրում, որ Աթային նշանակեն գավառի մելիք. «Եւ հրամայեաց նօտարին գրել նօմոս՝ որ է բաղամ[34] մելիքութեան, և ետ նոցա՝ յորդւոց յորդիս լինիլ մելիք յայնմ գաւառի»[35]:

Պատմիչի այս հաղորդումը կարելի կլիներ դասել շահ Աբասի անվան շուրջ հյուսվող ավանդազրույցների շարքին, եթե Զաքարիա Քանաքեռցին վերոգրյալին չհավելեր հետևյալը. «Եւ է մինչև ցայսօր մելիքութեան գաւառին Կայենաձորոյ՝ որ է Ղրաղի ձոր: Եւ ի թուին Ռ. և ՁՁ. (1637) էառ զիս եղբայրն իմ Խաչատուր, և գնացաք ի գիւղն Միափոր և ի տան մելիք Աթային կալաք խանութ և գործէաք արուեստ ոսկերչութեան: Եւ ի նոցանէ ուսաք զամենայն: Եւ էր մելիք Աթայ անուն՝ ըստ անուան հաւոյն իւրոյ առաջնոյ մելիք Աթային. բայց պատառ մի հաց այսքան մեծութեան հասոյց»[36]:

Այսպիսով, Զաքարիա Սարկավագի հաղորդումից պարզվում է, որ 1637 թ. Կայենաձորում գոյություն է ունեցել դարասկզբին շահ Աբասի ստեղծած հայկական մելիքությունը: Իսկ թե իրականում ի՞նչ հանգամանքներում է այն ստեղծվել, դժվար է ասել:

Քննվող ժամանակաշրջանի Հյուսիսարևելյան Հայաստանի նշանավոր մելիքություններից էր Կիրանց գետակի ափին գտնվող Հին Կունեանի մելիքությունը[37]: Այստեղ գտնվող Ս. Աստվածածին եկեղեցու մուտքին մինչ այժմ պահպանված արձանագրությունից պարզ է դառնում, որ այն կառուցվել է 1675 թ. այստեղ իշխող՝ Խերումյան տոհմից սերող մելիքական տոհմի կողմից. «[Ի] թ[վ]ին ՌՃԻԴ: (1675), ես՝ Մելիք Շահնազարըս, որդի Մելիք Ասլամազին Ասկէն Խէրումէ, ամուսին իմ Խանազատէն շինեցինք Սուրբ Ա[ստուա]ծայածին: Զեռամբս Յակոբին»[38]: Արձանագրության մեջ հիշատակված մելիք Շահնազարը հետազոտողներին հաճախ շփոթության է մատնել: Կ. Տեր-Մկրտչյանը ենթադրել

---

33 **Զաքարիա Քանաքեռցի**, *Պատմութիւն*, էջ 51:

34 *Բաղամ*՝ այս պարագայում գիր, մելիքությունը հաստատող հրամանագիր:

35 **Զաքարիա Քանաքեռցի**, *Պատմութիւն*, էջ 52:

36 Տե՛ս նույն տեղում:

37 Հին Կունեն գյուղատեղին գտնվում է ՀՀ Տավուշի մարզի Աճարկուտ գյուղի սահմաններում:

38 *Դիվան հայ վիմագրության*, պ. VI, Իջևանի շրջան, կազմեցին՝ ***Ս. Ավագյան, Հռ. Ջանփոլադյան***, Երևան 1977, էջ 216:

է, որ նա Գեղարքունիքի Մեծ Մազրա գյուղից սերված հայտնի Մելիք Շահնազարի ժառանգներից է՝ չբացառելով հանդերձ, որ ի դեմս նրա գործ ունենք մեկ այլ Շահնազարի հետ, որը ոչ մի ազգակցական կապ չունի Գեղարքունիքի Շահնազարյանների հետ[39]։ Գեղարքունիքի մելիք Շահնազարի[40] որդիների ու թոռների անունները մանրամասն հիշատակվում են 1606 թ. նրա պատվերով ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում։ Դրանում չկա որևէ անուն, որը կհամընկնի Կունենում հիշատակված մելիքական ընտանիքի տան անդամների հետ[41]։ Քննվող ժամանակաշրջանում Գեղարքունյաց մելիքները համարվում էին Արևելյան Հայաստանի ամենազորեղ մելիքական տներից մեկը։ Պատահական չէ, որ շահ Աբասը Գանձակն ու Վրաստանը նվաճելուց հետո 1606 թ. հյուրընկալվեց մելիք Շահնազարի տանը և առատ ընծաներ տվեց նրան ու որդիներին[42]։ Գեղարքունիքի մելիքների հետ որևէ ազգակցական կապի առկայության դեպքում Կունենի տերերն անպայման դա կհիշատակեին։ Առավել ևս, որ հանդիպում են վկայություններ, որոնցում Շահնազարյանների հետ անգամ մայրական գծով ազգակցական կապն այս կամ այն տոհմի կողմից ընդգծվում է[43]։

Սուրբ Աստվածածին եկեղեցուց ոչ հեռու գտնվում է հին գերեզմանատունը, որտեղ պահպանվել են արժեքավոր վիմագիր տապանաքարեր։ Դրանցից մեկի արձանագրությունից տեղեկանում ենք, որ մելիք Ասլամազն ունեցել է նաև Բահրամ անունով որդի, որը մահացել է 1674 թ.[44]։ Գերեզմանոցի կենտրոնական մասում է գտնվում նաև Մելիք Աղայի գերեզմանաքարը, որի արձանագրության համաձայն՝ նա մահացել է 1570 թ.։ Ռ. Սիմոնյանի կարծիքով մելիք Աղան մելիք Ասլամազի հայրն է՝ Շահնազարի պապը[45]։

Խերումյան մելիքական տան տիրույթները Կունենի շրջակայքով չէին սահմանափակվում։ Դա է վկայում Հաղարծնի վանական համալիրի Ս. Ստեփանոս եկեղեցու հարավային պատի արտաքին մակերեսին պահպանված արձանագրությունը։ Այնտեղ մասնավորապես կարդում ենք. «Ի թվին հայոց ՌՃ.ին (1651), ի թագաւորութեան պարսից շահ Սուլէմանին որդոյ փոքր Շահապասին

---

39 **Տէր-Մկրտչեան Կարապետ**, *Նիւթեր հայ մելիքութեան մասին*, պ. Բ., Ս. Էջմիածին, 1914, էջ 160։

40 Մելիք Շահնազարի ժառանգների մասին մանրամասն տե՛ս **Ա. Մաղալյան**, *Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIX դդ.*, Երևան, 2007, էջ 158-165։ **Ք. Կոստիկյան**, «Գեղարքունիքի Մելիք-Շահնազարյանների պատմությունից», *Մերձավոր և միջին արևելքի երկրներ և ժողովուրդներ*, հ. XXIV, Երևան 2005, էջ 307-321։

41 *Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.)*, հ. Ա, Երևան, 1974, էջ 219։

42 **Առաքել Դավրիժեցի**, *Գիրք պատմութեանց*, Երևան, 1990, էջ 114, հմմտ. *Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ (1621-1640)*, հ. Բ, Երևան, 1978, էջ 219։

43 *Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.)*, հ. Ա, էջ 364։

44 **Ռ. Սիմոնյան**, *Տավուշի մարզ*, Երևան, 2012, էջ 181-183։

45 Նույն տեղում։

և տէրութէան ..... իշխանին եւ մէլիքութեան պարոն Շահնազարին և ի հայրապետութեան Յակոբա Ջուղեցոյ և առաջնորդութեամբն ս(ուր)բ ուխտիս Յակոբ եպիսկոպոսի...»[46]: «Դիվան հայ վիմագրության» հերթական պրակի կազմողները նկատել են, որ Հակոբ Ջուղայեցին կաթողիկոս է եղել 1655-1680 թթ., Սեֆյան շահ Սուլեյմանը գահակալել է 1666-1694 թթ.: Այստեղից նրանք ենթադրել են, որ արձանագրության ճիշտ թվականը պետք է լինի ոչ թե 1651, այլ 1671: Այսպիսով, Կունենի Աստվածածին և Հաղարծինի Ս. Ստեփանոս եկեղեցու արձանագրությունները գրվել են չորս տարվա տարբերությամբ: Իրարից ոչ այնքան հեռու գտնվող այդ եկեղեցիների արձանագրություններում հիշատակվող Շահնազարը թերևս նույն անձնավորությունն է, որը Կունենից բացի նաև տիրույթներ ուներ Հաղարծինի շրջակայքում[47]:

Այսպիսով, Կունենում և Աղստևի հովտում գոյություն է ունեցել հայկական մելիքություն, որի մելիքները ոչ մի կապ չունեն Գեղարքունիքի Շահնազարյանների հետ: Ուստի, գործ ունենք սոսկ անվան զուգադիպության հետ: Կունենի մելիքներն իրենց ծագման մասին ասում են. «ասկէն խէրումէ», այսինքն «ասկէն» տվյալ դեպքում ազգ-տոհմ իմաստն է արտահայտում[48]:

Խերումյանների մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդել «Արձագանք» շաբաթաթերթի թղթակից Քաջիկյանը, որը 1888 թ. այցելել է Կունեն: Նա ուսումնասիրելով Կունենի անտառապատ ու լքված տարածքը, այնտեղ հաշվել է յոթ մեծ ու փոքր եկեղեցիների ավերակներ, հին գերեզմանատեղի ու կամուրջներ: Տպավորված իր տեսածով հոդվածագիրը ենթադրել է, որ հավանաբար ժամանակին այդտեղ քաղաքանման բնակավայր է եղել: Գրի առնելով Աստվածածին եկեղեցու արձանագրությունը՝ նա նաև նշել է, որ Խերումյանների ժառանգների մի մասն ապրում է Կունենում, մի մասը Թիֆլիսում: Նրանց մի մասն էլ մահմեդականություն ընդունելով՝ տեղափոխվել է մոտակա Խերումլի՝ արդեն թաթարացած գյուղը: Սակայն, այդ գյուղի բնակիչները Քաջիկյանին խոստովանել են իրենց հայկական ծագումը[49]: Թերևս գյուղին տրված «Խերումլի» անվանումը կապ ունի Խերումյանների հետ, որոնք հավանաբար հիմնել են գյուղը: Տեղին է նշել, որ այս տարածքներում XVIII դարի երկրորդ կեսից և XIX դարում

---

46 *Դիվան հայ վիմագրության*, պ. VI, *Իջևանի շրջան*, կազմ.՝ **Ավագյան Ս., Ջանփոլադյան Հ.**, Երևան, 1977, էջ 55:

47 **Ռ. Սիմոնյան**, «Եղել է նաև Խերումյան մելիքական տոհմ», *Էջմիածին*, 1998, հունիս, էջ 78-79:

48 Նույն տեղում:

49 *Արձագանք*, 1888, № 10, էջ 134:

ահագին չափերի էր հասել հայ բնակչության բռնի կրոնափոխությունը[50]: Խերոումլի գյուղի ավերակները գտնվում են Կիրանց գյուղից ոչ հեռու՝ հայ-ադրբեջանական սահմանին:

Նշված մելիքների տիրույթները, ինչպես տեսանք, ներառում էին մի քանի բնակավայրեր, և նրանց տրվող մելիք կոչումը չի կարելի նույնացնել տանուտերի հետ: Հյուսիսարևելյան Հայաստանում գոյություն ունեին նաև մեկ բնակավայրով սահմանափակվող մելիքություններ, որոնց մասին նույնպես հանդիպում են սակավաթիվ տեղեկություններ: Դրանցից էր Բարսումի մելիքությունը, որտեղ իշխում էին Մելիք-Առուստամյանները: Մ. Բարխուդարյանցի հաղորդած տվյալների համաձայն՝ Մելիք-Առուստամյանների նախնիներից Բագրատը մելիքության հրովարտակ է ստացել շահ Աբասից, և նրանց մելիքությունը ժառանգաբար անցել է հորից որդուն՝ հասնելով մինչև XIX դար[51]: Գետաբակում գոյություն ունեցած նմանատիպ մի մելիքության մասին էլ հիշատակել է Ս. Ջալալյանցը[52]: Այս դեպքում գործ ունենք տանուտերերի հետ, որոնց իշխանությունը չնայած ժառանգական էր, սակայն սահմանափակվում էր մեկ գյուղով:

Արցախի մելիքությունների համեմատ վերոհիշյալ մելիքությունները թույլ էին: Դա պայմանավորված էր մի շարք հանգամանքներով, որոնք խանգարեցին այս մելիքությունների հզորացմանը, և հետագայում գուցե նաև Խամսայի օրինակով միավորմանը: Հյուսիսարևելյան Հայաստանի մելիքությունների ճակատագրի վրա խիստ բացասաբար ազդեց երկրամաս ներթափանցած քոչվոր բնակչությունը:

Սեֆյան պետության թուլացմանը զուգընթաց, XVII դարավերջից սկսվեցին և հաջորդ դարում շարունակվեցին լեզգիների ավերիչ արշավանքները, որոնք կործանարար ազդեցություն ունեցան Հյուսիսարևելյան Հայաստանի համար: Մի շարք բնակավայրեր դատարկվեցին, բնակչության մի ստվար հատված գերեվարվեց կամ կոտորվեց, մի մասն էլ գաղթեց:

Հյուսիսարևելյան Հայաստանի տարածքի զգալի մի մասը ներկայումս գտնվում է Ադրբեջանի Հանրապետության կազմում: Հարևան պետությունը

---

50 Այս մասին վկայված է Սիմեոն կաթողիկոսի հիշատակարանում. «Ղազախեցի ժողովուրդն գոլով երեք և չորս տամբք յիւրամանչիւր գիւղորայս տաճկաց առանց Քահանայի և օրինաց և ուսեալք զբաւս և զգործս նոցա, մինչև բազումք ի նոցին մանկանց ո՛չ կարեին խօսիլ զհայերենի լեզուն, գրեալ էին մեծաւ աղերսանօք զթուղթ առ սրբազան Վեհրն, և խնդրեալ էին գրել վասն իւրեանց զինդիր առ Հերակլ արքայն, հանել զիմեանս ի միջոյ Տաճկացն, և ի մի վայր ժողովել, և յանձնել Իսկեանդար բէկին, որ մեծն էր Ղազախու». տե՛ս *Դիւան հայոց պատմութեան*, գիրք Գ., *Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանը*, Թիֆլիս, 1894, էջ 303:

51 **Մակար եպս. Բարխուտարեանց**, *Արցախ*, էջ 323:

52 **Սարգիս արք. Ջալալյանց**, *Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան*, մաս Ա., Բ, Երևան, 2016, էջ 538:

հետևողականորեն վերացնում է տեղի հայկական մշակութային ժառանգությունը՝ այդ կերպ ջնջելով հայկական հետքերը: Այս հանգամանքը առավել կարևորում է Հյուսիսարևելյան Հայաստանի մելիքությունների ուսումնասիրությունը:

ANDRANIK YESAYAN

THE MELIKDOMS OF NORTHEASTERN ARMENIA IN THE 17TH CENTURY

Keywords: Melikdom, Northeastern Armenia, Safavid Persia, Kunen, Tavush, Shah Abbas, Miap‘or, Shatakh, Melik.

The war between Ottoman Turkey and Safavid Iran, which lasted more than one and a half century, ended in 1639 with the conclusion of the Kasre-Shirin peace treaty. It was followed by a 90-years period of peace between the two countries. According to the treaty, among other Armenian territories, Northeastern Armenia again passed to Safavid Persia.

Although Northeastern Armenia did not escape the disasters that plagued Armenia during the reign of Shah Abbas (reigned 1587–1629), in contrast to its other parts, deportations in Northeastern Armenia were not massive and systematic. However, the demographic picture of Northeastern Armenia significantly changed since the 16th century, when the region was settled by different nomadic tribes. The Muslim population began to grow in the region. The Armenian people continued to live in mountainous areas. Several Melikdoms aroused there, the most notable of which were the Melikdoms of Tavush, Shatakh, Miap‘or and Kunen.

АНДРАНИК ЕСАЯН

МЕЛИКСТВА СЕВЕРО-ВОСТОЧНОЙ АРМЕНИИ В XVII ВЕКЕ

Ключевые слова: Меликства, северо-восточная Армения, Сефевидская Персия, Миапор, Кунен, Тавуш, шах Аббас, мелик,

Война между Сефевидской Персией и Османской империей, продлившаяся почти полтора века, закончилась в 1639 в г. Касре Ширинским

мирным договором. Затем последовал 90-летний период мира между двумя странами. В соответствии с этим договором, вместе с другими армянскими территориями, северо-восточная Армения вновь перешла к Сефевидской Персии. Несмотря на то, что северо-восточная Армения не избежала бедствий, преследовавших Армению во время правления шаха Аббаса (1587-1629 гг.), в отличие от других ее частей, она не подвергалась массовой и систематической депортации. Однако демографическая картина в этих районах Армении стала меняться начиная с 16-го века, когда там стали селиться различные кочевые племена.Число мусульманского населения возрастало. Армянское население продолжало жить в горных районах. Там сформировались некоторые меликства, из которых наиболее заметными были меликства Тавуша, Шатаха, Миапора и Кунена.